

ՏԱՍԵ ԵՒ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редація «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարությունները համար վճարում են
• Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԴՐԱՅԱՆՆԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ ԼՐԱԿՈՐ

ԱՌԱՋԻՆԿՈՒՄ 1887 - ԹԻՒՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, Նոյն դիրքով և Նոյն պարագրաֆով: Մենք կը ոտանայնք սեփական
ՀԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան դիմել 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամաշեփի տանը):
Կայսերական ռուս լեզուներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գրել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редація газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Յորենի առևտուրը Անդր-
կովկասում. Նամակ Ալեքսանդրապոլից. Նամակ
Բաթումից. Նամակ Խաղաղից. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Բաղրամյան պատգամա-
դրությունը. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.
— ՀԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ՊԱՏԱՍԻՆՆԵՐ. — ՅԱՏԱՐԱՐ-
ՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ծայրեր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՅՈՐԵՆԻ ԱՌԵՆՏՈՐԸ ԱՆԴՐԱԿՈՎԱՍՏՈՒՄ

Եւ այսպէս, ուրեմն մինչ հոկտեմբերի վերջերը,
սկսած այս տարվայ յոշնար ամսից, արտահան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՅՐԵՐ

Բ.

ՀԱՅՐԱ

Վանսի լեզուն հետզհետէ բացվում էր. նա մի-
անգամից փոխվեց և սիրտը ու հաշտ մարդուց
դարձաւ մի ուրախ ընկեր, որ հոգի էր տալիս
ամենքին: Մանաւանդ առանձին սէր և քաղցրու-
թիւն ունէր Արիստակէսի հետ, այնպէս որ միւս-
ներին երբ հարկաւոր էր մի բան հաւատարմանը, նա
ձեռքը դնում էր Արիստակէսի կուրծքին և լուր-
բովին անկեղծօրէն երգում էր նրա արևով: Այդ
բարեկամութիւնը, ինչպէս երևում էր, գնահա-
տում էր քարտաշը և ոչինչ չէր խնայում այդ ու-
րախ չլօթում համար: Եւ ինչի կտակէ հանդէս
էր գալիս նստածներին մէջ. շատ չանցած ամիսը,
ինչպէս ասում են, «խաղիկէր էին»:

Այդ միջոցին մեզ ծանօթ վարագործը ետև
րեացին երկու հոգի: Ոչ որ ուղարկութիւն չէր
դարձնի նրանց վրա, եթէ գինեմալը, որ եկող-
ներին մէջն էր, դուրս չը գար և չտար վանսին:

— Վանս ջան, տես ինչ եմ բերել:

— Վանս նայեց և տեղիցը վեր թռաւ:

— Բեր, բեր, դրա հոգուն մտնում:

Մնացածներն էլ հակացան թէ ով էր եկողը և
նոյնպէս ուրախացան:

Վերջապէս այդ ուրախալից հիւրը առաջ ե-
կաւ, կանգնեց ճրագի մօտ:

Դա մի կարճիկ կին էր, չէկ մազերով և կա-
պոյտ աչքերով հասարակ չորեր հագած: Ինչպէս
մի մարդ, որ մի քանի տեսակ տարանքի մէջ լա-
ւը ընտրելու համար, շտապում է ամենքին էլ լաւ
նայել և շտապով իրանը դնել, այդպէս էլ այդ
կինը նայեց նստածներին, դեռ ոչինչ չը խօսելով:
Վանս նրան հրաւրեց իր մօտ: Կինը նստեց
նրա և Արիստակէսի մէջ տեղը, ինչպէս մի վա-
ղուց ծանօթ: Վանս խոսեց զրկեց նրան, բայց
նա զգուշացնել հետաքրքիր երևույթներ իրանից:
— Ինչ եւ ուղում, հոգիս, ասաց Վանս, այն-

ված է ցորեն մինչև չորս միլիոն պուդ և հաւա-
նական է, որ մինչ հոկտեմբերի վերջը արտա-
հանված կը լինի հինգ միլիոն պուդ ցորեն: Գա-
րու արտահանութիւնը յոշնարից մինչ հոկտեմբե-
րի վերջը, այս տարի, հասել էր 634,000 պուդի,
իսկ մինչ հոկտեմբերի վերջը հաւանօրէն գարու
արտահանութիւնը կը հասնի 750,000 պուդի:
Գարու առևտուրը գրեթէ բացառապէս կենտրո-
նացած է փոթիում, որովհետև Բաթումից այդ
ամբողջ քանակութիւնից այս տարի հազիւ թէ
տասը հազար պուդ արտահանված լինի:

Համեմատած անցեալ տարվայ հետ, մեծ փոփո-
խութիւն է նկատվում այն արտահանման հը-
կիրների մէջ, ուր ներմուծված է մեր ցորենը: Թէ

քան մօտեցնելով իր դեմը նրա դեմքին, որ կինը
լաւ համարեց քիչ դէպի մի կողմը ծռել իր դը-
լուրը:

— Ոչինչ, պատասխանեց նա ցած ձայնով:

— Տո, այսպէս էլ անպիտան կը լինի, եթէ չէիր
ուզում խօսել, ինչո՞ւ էիր գալիս:

Եւ նա կրկին դիմեց գարունի օգնութեանը և մի
ուրախ եղանակ անցեց: Այդ նուագածութիւնը ա-
մենքի ուրախութիւնը գրգռեց. սկսեցին այստե-
ղից այնտեղից թրքական խաղեր մուսու և յափշ-
տակված զմայլելի կնոջ դէմքով:

Այդ դէպքը շատ մաշված էր և քրքրված: Նրա
միակ հրապարակ ըստը, որ մնացել էր, կապոյտ աչ-
քերն էին, որոնց մէջ դեռ բոլորովին չէր մարկ-
աւորվել ձգտական ջերմութիւնը: Իսկ միւս տե-
ղերի վրա նկատելի էր նրա տարած սոսկալի
կեանքի ամբողջ պատկերը: Կաշին, որ աչքերի մօտ
չատ կնճիռներ էր կաղմուլ, կարծես տաք ջրի մէջ
այրված էր և պսպրում էր ճրագի բուրբուլյն
լուսից: Այտերի վրա նկատելի էին նոր բծիկված
վերքերի հետքերը: Ոսկորացած նիստը ձեռքը դէմ
էր տուել ծնոտին և անշարժ նստել էր:

Գլուխները տաքացրած խմորները այժմ բարձ-
րացրին մի անհնարին աղմուկ: Մէկը միւսին համ-
բարձրում էր, հազար անուշ խօսքեր էր ասում, հա-
ւատարմեցնում համար որ ընկերի համար պատրաստ
է մինչև մահ ծառայել: Միւսը լսելով այդպիսի
խօսքեր, համարեա լայ լինելով հաւատարմութիւն էր,
որ ինքն էլ ոչինչով պակաս չէ, որ ինքն էլ յօթար
է մտնել, սպանվել, վերջին կաթիլ արիւնը թա-
փել:

Արիստակէսը բոլորի սիրելին էր: Նա ուրախ
զուարթ խօսում էր, սիրտ էր տալիս ամենքին:

— Ինչ կայ, ասում էր նա, հազիւ կարողանա-
ւոր աչքերը բաց անել,— աշխարհս հինգ օր է,
հինգն էլ ան: Մեռնելու ենք, լաւ մտնենք. ապ-
րելու ենք, լաւ ապրենք, ինչ է եկել փառք Աս-
տուծու, փողի եմ կարօտ, օրական մահէթ ու կէ-
տին փող չեմ ասում: Աղաւսի ջան, այս բաժակն
էլ խմիր զղբալուքի հետքը:

Գինեկաճառը լուսեց լաճակը, եղբայրութիւնից
անպակաս լինել մաղթեց, խնդրեց Աստուծուց որ
իրանց վերջերը բարի անէ, միմեանց մօտ ամօ-
թակի չը թողնէ:
Այդ ժամանակ Վանս խօսում էր կնոջ հետ և

ինչ կարգով են գալիս այդ երկիրները անցեալ
տարվայ մեղմանից ներմուծված ցորենի համար,
անցեալ յօդուածում մենք յիշեցինք, իսկ ինչ վե-
րաբերում է այս տարվան, հնա թէ նոքա ինչ
հերթով են մասնակցել. այս տարվայ արտահան-
ված ցորենից ամենից շատ գնացած է խաղիս, յե-
տոյ արդէն գալիս է Յունաստանը գրեթէ նոյնքան
պուդով. յետոյ Ֆրանսիան, Անգլիան, Թիւրքիան
և այլն, որոնց մասին մենք կարող ենք ներկայա-
ցնել հետևեալ թվանշանները. այս տարի մեղմանից
արտահանած են մինչ 1-ն նոյններին.

Խաղիս	960,000	պուդ.
Յունաստան	920,000	»
Ֆրանսիան	830,000	»
Անգլիան, Մալտայով և		
Վերալաւարով	700,000	»
Թիւրքիա	350,000	»
Բելգիա	60,000	»
Հոլանդիա	52,000	»
Գերմանիա	40,000	»
Աւստրիա	5,000	»

Այդ բոլոր յիշված երկիրներից մի առանձին
բացատրութեան կարօտ է Յունաստանի խաղա-
ցած դերը: Լրագրական տեղեկութիւններից ըն-
թեքող հասարակութեան արդէն յայտնի կը լինի,
որ Յունաստանը, դրոված Բալկանյան և Բոլգա-
րիայի միացումից, որ տեղի ունեցաւ անցեալ
տարվայ սեպտեմբեր ամսին, իր զօրքը պատերազ-
մական դերքի մէջ դրեց: Նրա պատերազմական
պատրաստութիւնները ամբողջ տեսչին: Պէտք է
հիշադրել, որ Յունաստան ուղարկած մեր ցորե-
նը պատերազմական պաշարի համար է ծառայել

հազար ու մի բաներ էր հասկացնում, բաներ, որ
այդ արարածը կհանդուր շատ էր լսել, անչափ
չափ: Նա վերջապէս բացեց ընկած արարածի լե-
զուն, երբ կարողացաւ երկու բաժան զինի խը-
մացնել նրան: Տեղադրում փոխվեց:

— Այ ջան, ա՛յ ջան, Մաշօ, գոչեց Վանս և
ընկաւ պսպրուն դէմքի վրա, սկսեց համբոյրներ
տալ նրա դանաղան կողմերին:

Այդ տեսան միտները և նոյնպէս վառվեցան
Վանսի կրակով: Մի բուռնից յետոյ համբոյրները,
անթիւ ու անհաշիւ համբոյրները կարկտի պէս
թափվում էին կնոջ ամբողջ դէմքի վրա, բայց
նա անշարժ էր, անլուրով: Կարծես նա խնայաւ
որ այլ ևս լուսեւ ժամանակ չէ և լեզուին աղա-
տութեան տուաւ, աչքերին աւելի ևս զորեղ խո-
րամանկ արտայայտութիւն: Ամեն մէկին մի բան
ասում էր, խնայում. իսկ ինչ ասում էր, այնպի-
սի բաներ էին, որոնցով գրգռում էր լուրջների
անառնական կրքերը, վառում էր նրանց միշտ
այդպէս լինելու ցանկութեամբ: Փիչ էլ անցաւ և
քստմնելի տեսարանը աւելի ևս պարզվեցաւ. ա-
ռանձին կինը արդէն այնպիսի բաներ էր ասում,
որոնք նողկանք կը պատճառէին այդ իսկ թըշ-
աւանդներին, եթէ նրանք պակաս խմած չլինէին:

Բայց դրանց մէջ կարծես զգալիորէն չէր մնա-
ցել: Նրանց աւելի ևս գովաբանում էին կնոջ զրու-
նի շարժումները, անտանելի խօսքերը: Խա-
ղաճառի մէջ աշխատում էր շատ խօսել նրա
հետ, լսել շատ այնպիսի խօսքեր, որոնք վայրենի
կրքերն են վառում: Այդ մրցութեան ժամանակ
տեղի ունեցաւ մի աղմկալից իրարանցում: Բայց
ինչպէս որ լինի, կինը աւելի քաղցր էր Վանսի
և Արիստակէսի հետ. առաջինը իրան հարկաւոր
էր, իսկ երկրորդը առաւ փող էր մոխրում: Ինչ
որ պահանջում էր նա, խոսեց կատարում էր ար-
հեստաւոր և դա բաւական էր այդ զիջակերին
պահելու համար:

Ինչոքեք տեղի շատ երկար Գինեկաճառը ար-
դէն բարկացած վերթիւնութեամբ էր, աչքերով նշան
էր անում կնոջը որ վերջացնէ: Նա կարծես կըշ-
տացել էր, և այժմ պատրաստ էր ամեն մէկին
փողոցը շարժել: Ինչ ինչ էին հարկաւոր:

Այդպէս էլ եղաւ: Նստածներին այնպիսի ճար-
պիկութեամբ դուրս արաւ, որ ոչ ոք էլ չը վշտա-
ցաւ: Մնացին Վանս և Մաշօն:

և ոչ թէ ժողովրդի մշտական պէտքերին: Դրանով
ուզում եմ ասել մի և նոյն ժամանակ, որ ապա-
գայում մենք մեծ յայտնի չը պէտք է դնենք Յու-
նաստանի վրա, և որ այս տարվայ նոյն մեծ
մասնակցութիւնը պէտք է ընդունենք որպէս պա-
տահական դէպք:

Միանգամայն այլ նշանակութիւն ունի Եւրո-
պայի արևմտեան երկրների մասնակցութիւնը
մեր ցորենի առևտուրի մէջ: Արդէն շատ վաղուց
է, որ Անգլիան, չը նայած իր երկրագործական
բարձր զարգացման, այլ ևս իր ընտելիների պա-
հանջի համեմատ ցորեն չէ արդիւնաբերում և այս
բուսէին նա ստիպված է իրան հարկաւոր ցորենի
կէսը և աւելին անգամ, օտար երկրներից, զըշ-
խաւորապէս, ի հարկէ, Ամերիկայից բերել տալ:
Այդ է պատճառը, որ ցորենի առևտուրի աշխար-
հիս մէջ ամենամեծ շուկան, ամենամեծ բաղաւրը
նոյն ինքն Անգլիան քաղաքն է: Թէպէտ և ոչ այդ
չափով, բայց և այնպէս ներմուծման միշտ կա-
րօտ են նաև Ֆրանսիան, Բելգիան, Խաղիս, Գերմանիան:
Այդ հանգամանքը կարևոր է մեզ
համար նրանով, որ եթէ այդ երկիրները այս տա-
րի մեծ քանակութեամբ մեղմանից ցորեն է տար-
վել, և մեր այդ ցորենը ծախվել է մեզ համար
ձեռնառու գինով, ուրեմն անհիմն չի լինի սպա-
սել, որ եթէ մենք կարողութիւն ունենանք ամեն
տարի նոյն կամ աւելի մեծ քանակութեամբ մեր
ընդ արտադրել և արտահանել, Եւրոպայում մենք
միշտ գնորդներ կը գտնենք: Իսկ ինչ վերաբերում է
Թիւրքիային, քանի որ Տաշկա-Հալապատանը չորե-
կառքի շվոցը չի լսի, մի քանի հարիւր հազար
պուդով նա միշտ մեղմանից ցորեն գնելու կարօ-
տութիւն կունենայ: Անցեալ տարվայ Թիւրքիայի

Շատով փոքրիկ սննեակում տիրեց խաւարը:
Գինեկաճառը քաղցր քնած էր:

Օրը բացվել է, պայծառ ու տաք ձմեռային
օր: Փամին դադարել է, Բաղուի փողոցներում
կրկին սկսվել է անցուղաւոր, կինգանութիւն
տալով չոր ու մերկ քաղաքին:

Արիստակէսը քնից կշտացած, աչքերը բաց ա-
րաւ, նայեց իր տիւտը ու մօայլ ներքնայարկին,
մի ծանր լայն կանգնեց: Կարծես գլուխը դեմնի-
ցն էր կպել. այնքան ծանր է, որ արհեստաւորը
քիչ է մնում խեղդվել: Կարծես ուղիղը լրված է
հազարաւոր ասեղներով, որոնք անխնայ ծակծա-
կում են ամեն անգամ, երբ նա շարժվում է: Քիչ
այդպէս մնալուց յետոյ նա փորձեց վերկենալ:
Կանգնեց: Արեգակի պայծառ լույսը կարծես սուր
սլաքների պէս ծակտուած է աչքերը, տան պա-
տերը պտոյտ են գալիս նրա առջև: Կտրած կոճ-
ղի պէս նա վայր ընկաւ, վերմալը գլխին դը-
ցեց:

Առաջին բանը, որի մասին նա մտածեց, այդ
դէպքով ինչո՞քն էր: Ինչ նստեց իր վրա: Ա-
րիստակէսը գտաւ իր արկաւորը և հանելով փո-
ղերի քսակը, տեսաւ որ բոլորովին դատարկ է:
Ուրեմն գինեկաճառը ստացել է իր փողը: Կար-
ծես այդ հանգամանքը թիթեացիկ զլխացաւը,
կարծես նա շատ էր վախում գինեկաճառ Աղա-
սուց: Բայց յանկարծ մի բան յիշեց, միան է դա-
ւիս, որ դուրս գալիս Աղաւսին ասաց որ ծախսա-
րար հիւրը մի քանի լուրի մնաց տալի: Մի շատ
աղօտ յիշողութիւն, բայց, ինչպէս երևում էր,
անխալ բոլորովին: Արեգակը պէտք էր տալ, և
այսպիսի մի քանի դրամական հարցեր շտապեցին
էլ աւելի խառնել նրա տան ու վրա եղող դու-
լու: Վերջապէս վճռեց:

— Եւ, տա էլ մի բան էր, ամեն օր այսպէս չի
լինի... Խօ աշխարհիս բոլոր ցաւերը ինձ վրա
չեն դրել... Ինչ պիտի տանենք աշխարհից... միշտ
մեր միւսը չենք ուտելու...

— Ոչինչ, ոչինչ, շարունակեց նա քիչ լուրջիւ-
նից յետոյ:
Այդ երկու խօսքով վճռեց բոլոր հարցերը, ո-
րոնք չէին հեռանում նրա աչքից:

Եւ դարձեալ քնեց:

անդամական հրէշաւոր ամուսնական կապեր են կապել տալիս իրանց զաւակներին»։

Ամենահաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ պ.պ. Բէյտէր եղբայրները, իրանց մօր մահուանից յետոյ, ի յիշատակ նորա՝ կամուսնու են կառուցանել իրանց հաշտով մէկ երկսեռ ուսումնական հաստիքներ, երթեմէ հայ երեխաների համար, Սրբ. Գեորգ եկեղեցու դպրոցում, որը կառուցված է 1853 թ.ին հանգուցեալ տիկնոջ արդեամբ։ Չէ կարելի չուրախանալ որ Բէյտէր եղբայրները, թէև իրանք հայ-լուսաւորական դաստիարակներ չը պատկանելով, այնու ամենայնով յանձն են առնում կառուցանել իրանց հաշտով մի հայոց ծխական դպրոց իրանց մօր յիշատակին, յարգելով հանգուցեալի դաստիարակները լուսաւորական կրօնը։

Գեկտեմբերի 7-ին թիֆլիսի ժողովարանում կայացաւ պարսկադէս յօդուս ուսուցչ Բարեգործական ընկերութեանը։ Պարսկադէսը շատ լաւ աշուղակեցաւ և այնպիսի անազն բազմութիւն են լցնում ժողովարանի դահլիճները, որ այդ անազնի դահլիճները աւելի ժողովուրդը չէին էլ կարող իրանց մէջ պարունակել։

Այս օրերս վախճանեցաւ թիֆլիսի մի հայ, Ալէքսանդր Միրզո Գ. Ի. որ աւելի յայտնի էր մեր քաղաքի օտարազգի շրջաններում, թէև հանգուցեալը պատկանում էր թիֆլիսի հայոց հին ընտանիքներից մինին։ Նա երկուսուսուրկութեան ժամանակ զինուորական ծառայութեան մէջ էր, յետոյ թողնելով ծառայութիւնը և առանձին հակուսն գգալով դէպի գեղարուստը, իր ունեցած միջոցները գործ էր դնում թէ Ռուսաստանի և թէ Եւրոպայի ամենահայտնաւոր նկարիչների թէ իսկական պատկերները և թէ նրանց պատճենները ձեռք բերելու։ Միջոցով առաջինն եղաւ, որ բաց արեց թիֆլիսում նկարչութիւնների ցուցահանդէս, նշանակելով շատ էփան մուտք և ոչինչ չը խընայելով մի չքից ընտանիքներ իր ցուցահանդէսի համար վարձեցուց Նա սկզբից, մի քանի տարի առաջ վարձեց Շիօսի տան երկրորդ յարկի շէնք ընտանիքներ, որտեղ այժմ «Լուսնակ» է կոչւում։ Բայց ինչպէս յայտնի է, թիֆլիսում բացի մոշային սպորանքների մագալիններից, գինեաներից և հասարակաց անեքից ուրիշ ոչինչ չէ աշուղվում։ Ոչ ոք գրեթէ չէր այցելում պատկերահանդէսը և հանգուցեալը վերջին տարիները իր ձեռնհասութեանը աւելի համարտ կերպարանք տուց, դեռնողով իր ցուցահանդէսը իր փոքրիկ բնակարանի մէջ։ Այդտեղ էլ ոչ ոք գրեթէ չէր այցելում ցուցահանդէսը։ Միջոցով արդէն բաւական հասակով մարդ էր և անպատիւ Նա մեռաւ չքաւորութեան մէջ, ինչպէս ասահարակ մեռնում են մեզանում այն բոլոր մարդիկ, որոնք ոչ թէ իրանց անձի համար, ետական, անասնական կերպով են ապրում, այլ իրանց կեանքի համար անմիտ նպատակ են դնում այս կամ այն կերպ կրթել մեր հասարակութիւնը։

Ստացանք Կ. Պոլսում հայերէն լեզուով հրատարակւող «Կիլիկի» ծագողական ամսագրի մի քանի համարներ։ Այդ ամսագրի անօրին է Նըշան Պէրպլեհիան, իսկ խմբագիրը Գ. Յ. Պարտիսեան, «Ազգային ջոկերի» հոգեակաւոր հեղինակը։ Բայց մեր սեղանի վրա դրված մի քանի համարներից երկուսը անհիմն ենք, որ Պարտիսեանի երգիծաբանական տաղանդը արդէն բաւական թուլացել է և գրելը ընթացել։ Գննել այս համարների պրամուտիւնները, ինչպէս մեզանում ասում են, ոչինչ աղ չ'ունեն և ոչինչ ծիծաղ չեն չարժու, այլ միայն ներդաշնակութիւն դէպի «Ազգային ջոկերի» հեղինակի երգիծաբանական տաղանդի անցեալը։

ՄՈԶԳՈՎԻՅ մեզ դրում են։ «Արդէն յայտնի է որ մեր Ասորական թիմի առաջնորդը տեղափոխվում է Լեմբարձին, սինօգի անդամի կոչւումով, իսկ նորերում «Մշակ» (№ 125) աւանդ մեզ այն բուր, որ իբր թէ մեր թիմի առաջնորդը նըշանակվում է Նրեանի թիմական առաջնորդ, Սուրբնեանց եպիսկոպոսը։ Մենք շատ ուրախ կը լինենք կթէ այդ բուրը ստուգվի, որովհետեւ Ասորական թիմը պէտք ունի մի ժիւր, եւսնորդ և ուսումնական առաջնորդի, որ կարողանար հոգեւորականների դասը լուսացնել, ուսումնարանները կարգի ու կանօնի գցել և ժողովրդի վրա հեղինակաւոր ներգործութիւն ունենալ, խրատելով

ու քարոզելով նրան իր թմբութիւնից դուրս գալու։ Ասորական թիմը ամենամեծաբար և ամենամեծապէս զորութեան մէջ է դնում և կարող է մի եւսնորդ առաջնորդութեանը։

Երկուշաբթի, ամսի 8-ին, Գիւղարանտեսական ընկերութեան ընդհանուր ժողովում պ. Արախանեանը կարգաց իր զեկուցման շարունակութիւնը «Անդրկովկասի ցորենի առևտրի» մասին խորհուրդներ կայեցին և ընդհանուր և բաւական զեկուցումը հետաքրքիր էր իր բովանդակութեամբ, և ինչպէս երևցաւ, բաւական լաւ տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վրա։ Պարտիսեանը խոստացաւ իր զեկուցման վերջին մասը կարգաւ ապագայ ժողովներից մէկում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՒԳԱՐԱԿԱՆ ՊԱՏՊԱՄԱՌՈՐԹԻՒՆՆԵՐ

Փոքրիկ Բօլզարիան դեռ շարունակում է նրա օրը եւրոպական դիւլաւարապիւն և եւրոպական քաղաքականութեանը։ Այդ փոքրիկ աղջկան քաղաքական կեանքի ճակատագրական հանելուկը ոչ թէ միայն չէ լուծվում, այլ և կարծէք այս ձմեռն էլ լուծվելու բաղդը չը պէտք է ունենայ։ Այս, այդ քաղաքական հանելուկը դեռ շատ մը ատճառներ և դրամներ պէտք է պատճառէ, որովհետեւ ուրիշ կերպ է հասկացվում այդ հանելուկը Սֆիւայում, ուրիշ կերպ Պոլսում, ուրիշ կերպ Վիեննայում, ուրիշ կերպ Մոսկուայում, միանգամայն ուրիշ կերպ Փարիզում։ Քաղաքական հրապարակի վրա շատ բան կայ, բայց իսկապէս վճռական ոչինչ չը կայ։ Անդրկովկասի ցորենի կուլիւնները Զերչիլի և Սալբուրքի ճառերից հետո չեն գնում։ Բիւսարիկ շարունակում է ըստ սովորութեան խորհրդաւոր ցոյցեր անել և վախեցնել, Կառնօկի և ոգեւորներում է Սֆիւայի կառավարիչներին և նրանց կառնածել տալիս։ Իսկ թիւրքերում թէ ինչ է արել թիւրքերն այդ յայտնի չէ։ յայտնի է միայն միո հասած հեռագիրներից, որ Գաղթան-Ֆէնդիլն յետ է կանչվում Սֆիւայից։ Եւ այդ բոլոր անորոշութիւնների, խառնափոխութիւնների մէջ տարբերվում, տատանվում և այս ու այն կողմն է ընկնում Բօլզարիան, որ ունի սահմանադրութիւն, որ ունի դահ, ունի թագ, և որը մի քանի ժամանակ ասահայրներից անկախութիւն և հայրենիքի փառաւոր ապագայ էր երգում։ Սերբիայի դէմ փառաւոր յաղթութիւններ տանելով։

Ճամանակը փոխեցաւ, և ժամանակի հետ միասին փոխեցան հանգամանքները և երկրի դրութիւնը։ Ներկայումս Բօլզարիան քաղաքական երկունքի մէջ է դնում։ Սֆիւայի դահը թափուր է։ Երկրի բոլոր կողմերում քաղաքական շարժումներ են լինում։ Ամենայն օր կատարվում են ձերբարկւթիւններ և Վուսակցութիւնները կատարել կերպով միջոց են միմեանց դէմ։ շատ կուսակցութիւններ և շատ պաշտօնական անձինք պանդխտում են և հեռանում են հայրենիքից։ Քաղաքացի է և երկրի դիւլաւարական յարաբերութիւնը։ Ռուսաստանը յետ է կանչել իր հիւպատոմներին, և այդ ընդհանուր խառնաշփոթութեան միջոցին, Բօլզարիան պատգամաւորութիւն է ուղարկում Եւրոպական պետութիւնների մօտ՝ բացատրելու երկրի իսկական դրութիւնը և խնամալու պետութիւնների իսկական կարծիքը։ Բօլզարական պատգամաւորութիւնը ճանապարհորդում է։ Ուղարկութիւնը այդպիսով Սֆիւայից տեղափոխվում է դէպի Եւրոպական կառավարութիւնների և պատգամաւորութեան միմեանց հետ ունեցած և ունենալի յարաբերութիւնները։ Բօլզարական պատգամաւորութիւնը շատ բան ունի խօսելու, մէկը միւսին ետեւից նորանոր թեկնածուներ են առաջարկվում բօլզարական դահի համար—այդ մեծ խնդիրը պէտք է լուծել։ Լուծվեւ համար պէտք է գրականապէս ծանօթանալ այն կարծիքների հետ, որոնք աղեկցութիւն ունեն Սֆիւայի բաղդի վրա։ Պատգամաւորութիւնը արդէն եղաւ Ունգարիայում։

Պէշտի մէջ մեծ ցոյցեր արեցին պատգամաւորութեան անդամներին, տեղի ունեցան ողբերկած ճառախօսութիւններ։ Մասուրը աշխատում է կարգել պատգամաւորներին համալիրութիւնը Ասոր-Ունգարական քաղաքականութեան հետ։ Պատգամաւորութիւնը ընդունվեցաւ Վիեննայում։ Վիեննայի քաղաքական շրջանները դրաւող դիրք

ունեցին դէպի պատգամաւորները, կոմս Կառնօկի սիրալիր ընդունելութիւն արեց պատգամաւորներին, և կրկնեց իր յայտնի ճառի մէջ արտայայտած մտքերը։ Պատգամաւորութիւնը շատապէս հեռագրով իսկ յայտնել Սֆիւայի կառավարութեանը, որ Վիեննան հետեւում է իր յայտնի քաղաքականութեանը։ Վիեննայում պատգամաւորութիւնը պաշտօնական այցելութիւններ արեց և միւս պետութիւնների ներկայացուցիչներին Ռուսաց զեկուցման լօբանք-Բուստովինին, որ մասնաւոր կերպով ընդունեց նրան և յայտնեց, որ նա Պետերբուրգում պաշտօնապէս չէ ընդունվի... Պատգամաւորութիւնը հասել է Բեռլին, և այդ էլ այն խորհրդաւոր միջոցին, երբ դերմանական բեյլիստագը կոխ է տալիս զինուորական նոր օրինադրի առիթով։ Ինչպէս երևում է վերջին հեռագիրներից, Բիւսարիկ մի վճռական խօսք ասել է իր ուղում։

Պատգամաւորները այցելութեան են գնացել պետութիւնների դեսպաններին, ուսուցչ զեկուցման կոմս Զուլաւով նրանց չէ ընդունել։ Թէ որտեղ կը գնան պատգամաւորները Բեռլինից—այդ որոշ կերպով յայտնի չէ։ Գուցէ Բեռլինը ընդունելութիւններից կախված կը լինի։ Փարիզ թէ ուրիշ տեղ գնալը։ Այսպէս յայտնի է վերջին հեռագրից, որ ստաւորս-սեկրետար Բիւսարիկ, իր տեսակցութեան ժամանակ, յայտնել է, որ պէտք է ենթարկվել Ռուսաստանին։ Ռուսի մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն։ Գուցէ շուտով կը որոշվի և զինուորական օրինադրի բաղդը, և այն ժամանակ Բեռլինի կառավարութիւնը կարող կը լինի աւելի ուրաջ կարգի, գուցէ այն ժամանակ մի փոքր աւելի կը պարզվի բօլզարական խնդրի ապագան։ Բօլզարիան անկախած տեսնում է, որ Եւրոպական պետութիւնները զինուորվում են, և զինվում են։ Այդ ինչի նշան է. ո՞վ դիտէ, գուցէ այս բոլորը կարգաբայնէ հետեւալ նշանաւոր խօսքերը. «Vis pacem, para bellum.»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Չը նայած, որ Գերմանիայում զինուորական օրինադրի մեծ աղմուկ է հանել—բայց իշխան Բիւսարիկ շարունակում է լուրթիւն պահել, և դեռ ոչ մի խօսք այդ առիթով չէ ասել։ Բեռլինի մասուրը զարմանում է այդ բանի վրա։

—Կօրուրդեան իշխանը, որը այժմ առաջարկվում է իբրե թեկնածու բօլզարական դահի համար, ծնվել է 1861 թ.ին, Վիեննայում։

—Լօրդ Սալբուրքի մի ճառ խօսեց պահպանողական կուրի մէջ։ Խօսքը կրկին իրանդիայի մասին էր։ Ազատամիտ մասուրը անխնայ կերպով ընդադառեց այդ ճառը։ Լօրդ Սալբուրքի քաջ է և հմուտ խօսքերով, իսկ գործի մէջ նա վախկոտ է և թույլ—անա լօնդօնի մի քանի ազատամիտ լրագիրների վերջնական կարծիքը Սալբուրքի այդ ողբերկած ճառի մասին։

—Գերմանիայի մի քանի կողմերում վերջին օրերս ձերբակալվեցան հարկերից աւելի սոցիալիստներ, որոնք տարածում էին բրօշլերներ։

—Փարիզում, Monge կոչված հրապարակի վրա պէտք է կառուցվի մի արձան, ի պատիւ Լուի Բլանի։

—Արիւմանօպօլից եկած տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ թիւրքաց զօրքը մի տեսակ պատերազմական դրութեան մէջ է դրած։ Այդ իրողութիւնը Արեւելեան-Բուստովինյան մեծ աղմուկ է դրել։

—Բօլզարիայի հաղորդում են, որ այնտեղ իշխան Ալէքսանդր Բատտենբերգի համար կատարվի պրօպագանդա են անում, և աշխատում են ողբերկ ժողովրդին նրա կրկին Բօլզարիա վերադառնալով։

—Անդրկովկասի նշանաւոր «Times» լրագիրը խօսելով Ալէքսանդր Բատտենբերգի Անդրկովկասում մասուր,—ի միջի պլանը ասում է. «Իշխան Ալէքսանդր եկաւ այստեղ ոչ իբրե բօլզարական դահի անգլիական կանդիդատ»։

—Շուտով Բեռլինում պէտք է ընմալի մի գործ, որի մէջ մեղադրուողները վեց կանաչ են, իբրե ներկայացուցիչներ։ Բեռլինի կարանդների ընկերութեանը։

—Գուրկինից հաղորդում են, որ շրջաններում, մի քանի տեղ, կուրիներ պատահեցին բոլզարական իրաւացիների և պարնեկական-կաթիլների մէջ։ Շատերը վիրաւորուեցան։

—Լոնդոնից հաղորդում են, որ անգլիական կառավարութիւնը յայտնեց Բ. Գրանը, որ Անգ

լիան չէ համարում Բ. Գրանը բօլզարական խնդրի մէջ բռնած դիրքին։

—Գերմանական մի քանի լրագիրների լօնդօնի թղթակիցները հաղորդում են, որ անգլիական վիկտորիա թագուհին հրամայեց, որ պալատի պաշտօնական յարաբերութիւնների մէջ իշխան Բատտենբերգին մեծարեն «Բօլզարիայի իշխան Ալէքսանդր» տիտղոսով։

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բուստովինի այժմեան թագուհի Եղիսաբէթը, որը գրականութեան մէջ յայտնի է Կարմէն Սիւրվա կեղծ անունով, 1887 թ.ին, Բուխարեստի առաջին իշխան դպրոցում կը կարդայ դասախօսութիւններ նորագոյն գրականութեան մասին։ Թագուհին մի առանձին սէր ունի դէպի գրականութիւնը և շատ դժգոհ է եղել, տեսնելով որ այդ դպրոցում գրականութիւնը վատ է դաս արգրվում, այնպէս որ նա վճեց անձամբ աւանդել այդ առարկան։

Փարիզի գիտութիւնների ճեմարանի մի ժողովի ժամանակ, Մէնիէ կարդաց մի զեկուցում այն մասին, թէ ինչ ծառայութիւն կարող են անել կապիկները։ Զեկուցանողը սկզբում այն միտքը յայտնեց, որ մեղենները չեն կարող կատարել այն բոլոր և բազմապիսի աշխատանքները, որոնք այժմ կատարվում են մարդկային ձեռքերով։ Այդ աշխատանքները շուտով կը յանձնվեն, դեկուցանողի կարծիքով «մարդու կրտսեր եղբայրներին»՝ կապիկներին։ Ի նկատի ունենալով կապիկի ֆիզիկական յարմարութիւնները և մտաւոր ընդունակութիւնները, հաստատապէս կարելի է ասել, որ նրանց սովորեցնելով և վարժեցնելով կարելի է հասցնել այն տեղ, որ կապիկները ամենապիտանի կերպով կը կատարեն սպասարկութիւնը պաշտօնը։

Սատանայի դոյուքեան գաղափարը մեր ժողովրդի մէջ շատ է տարածված և առհասարակ աւելի շատ վնասներ է տալիս, քան թէ կարծիքէ։ Երեւոյններից բաց կարելու ամենատարածական և ամենագործածական միջոցը «բուրդ»-ով վախեցնելն է, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ սատանան։ Այսպիսով դեռ ևս երեխայի մատղայ հասակից սկսում են ներշնչել նրա մէջ այն վնասաւոր հասկացող։ Գիշերները միշտով բոլոր փողոցները թունջ ու պոռնիքներով, ջրերի վրա, մարգրում, ձիւթաճանքում, շրապարտում, մանաւանդ երեղեցիներում, աւերակ վանքերում ու գերեզմանոցներում, հայ գիւղացու կարծիքով, պտտում են դանադան չար ողինքը։ Ամենաբաւ ու սրտոտ համարված տղամարդը անդամ, դիւրեղը մեթ ժամանակ, չէ համարձակվում գերեզմանոցի միջով անցնել։ Մահաւանդ այս կտալիտ նախապաշարմունքի չնորհիւ վնասվում է աւելի իզալան սեւը, որին նստողը կազմուածքի պատճառով, աւելի շուտ են բռնում դանադան ջրային հիւսնութիւնները։ Հայ գիւղացու կարծիքով, միայն «Հայր-մեր» և մի քանի այդպիսի աղօթքներն են, որ կարող են ապաստել սատանայից։

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 դեկտեմբեր։ Զինուորական բրգական ճեմարանի մէջ տեղի ունեցած երեկոյայ ակտի ժամանակ կարդացված հայտնի մէջ յայտնված է, որ ուրիշ ուսումնարանական շրջանների գիմնադիւններից մինչև անգամ մեղալով ապարտածներին ճեմարանում չընդունելու անհրաժեշտութիւնը ապագայում վերացնելու համար, ճեմարանական խորհրդի մէջ կազմված է առանձին յանձնաժողով։

ՍՈՖԻԱ, 8 դեկտեմբեր։ Գաղթան Էֆենդի շուտով յետ կը կանչվի։ ՀՈՍՄ, 8 դեկտեմբեր։ Ֆինանսների միւնիստրը հաղորդեց ժողովին, որ խաղալի ֆինանսական դրութիւնը այնքան բարդացել է, որ կարելի է հուրային հարկը էլի 10%-ով քչացնել, և այնու ամենայնիւ 2 միլիոն դրամը կանխապէս Միւնիստրը առաջարկեց նոյնպէս հինգ պրօցենտական երաշխաւորված պարտքը զարմնել չորս և կէս պրօցենտական։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 դեկտեմբեր։ Այսօր Պետերբուրգի նահանգական դատարանում սկսվեցաւ նահանգական սեկրետար Կլիւքին, իրաւունքներից զրկված Կորկի, աղնական Շարլօվիկու և վաճառականի կին Սիւլաօվայի գործի ընտելութիւնը։ Կորկը մեղադրվում է 1885 թ.ին, կեղծ թղթեր շինելով պետական բանկից 220 հազար ռուբլի տուտայում մէջ, որը պատկանում էր Բայանին գնդապետին, իսկ միւսները մեղադրվում են՝ մասնակցութեան մէջ։ Մինչև 50 հոգի վկանող կան։

ԲԵՐԼԻՆ, 8 դեկտեմբեր։ Բօլզարական պատգամաւորութեան անդամները երէկ այցելութիւն արեցին դեսպաններին, կոմս Զուլաւով, որի մօտ նոյն երկու անգամ եկան, նոյն չընդունեց։ Ստատոս սեկրետար կոմ Բիւսարիկ, ընդունելով պատգամաւորութեան անդամներին, յայտնեց նոյնա Ռուսաստանին ենթարկվելու անհրաժեշտութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 դեկտեմբեր։ «Journal de St. Petersburg» հերթում է Վիեննայի մի լրագրի հաղորդածը, որը վերաբերում է բօլզարական

